ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 27 » հունիս 2025թ. No 3893 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/3055-25 առ 25.06.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 5 դեղի գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հունիսի «27» - ի  N3893 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն  առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կոդելակ Բրոնխո | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ), նատրիումի գլիցիրիզինատ (գլիցիրիզինաթթվի տրինատրիում), թերմոպսիսի հանուկ, նատրիումի հիդրոկարբոնատ | դեղահատեր | 20մգ+30մգ+10մգ+200մգ; (10/1x10/) բլիստերում, (20/2x10/) բլիստերում | Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկ, Ագրեգատնայա 2րդ փ., 1ա/18 | Ռուսաստան | "ՕՏՍՖարմ" ԲԸ, Տեստովսկայա փ, II-րդ մասնաշենք, 12-րդ հարկ, տուն 10, 29 սենյակ, Մոսկվա 123112 | Ռուսաստան | ԱԴ | 23169 25.06.2025 | 26.03.2025 |
| 2 | Պեդեկս | պերմեթրին | լուծույթ արտաքին կիրառման | 5մգ/գ; 60մլ ապակե շշիկ | ԼՄՊ ՍՊԸ, 1, Վիետալվաս փ., Ռիգա, ԼՎ-1009- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, Գրինդեկս ԲԸ, Կրուստպիլս փ. 53, Ռիգա, ԼՎ-1057, Լատվիա- որակի հսկող (մանրէաբանական) | Լատվիա | ԼՄՊ ՍՊԸ, 1, Վիետալվաս փ., Ռիգա, ԼՎ-1009 | Լատվիա | ԱԴ | 23170 25.06.2025 | 18.12.2025 |
| 3 | Կրեոն 10000 | պանկրեատին (լիպազ 10000ԵՖՄ, ամիլազ 8000 ԵՖՄ, պրոտեազ 600 ԵՖՄ) | դեղապատիճներ աղելույծ | 150մգ; (20/2x10/) բլիստերում, (20) պլաստիկե տարայում | Աբբոտտ Լաբորատորիես ԳմբՀ, Յուստուս-ֆոն-Լիբիգ-Շտրասե 33, 31535 Նեուշտադտ | Գերմանիա | Աբբոտտ Լաբորատորիես ԳմբՀ, Ֆրոյնդալի 9Ա, 30173 Հանովեր | Գերմանիա | ԱԴ | 23171 25.06.2025 | 19.11.2025 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Կրեոն 25000 | պանկրեատին (լիպազ 25000ԵՖՄ, ամիլազ 18000 ԵՖՄ, պրոտեազ 1000 ԵՖՄ) | դեղապատիճներ աղելույծ | 300մգ (20/2x10/) բլիստերում, (20) պլաստիկե տարայում | Աբբոտտ Լաբորատորիես Գմբհ, Յուստուս-ֆոն-Լիբիգ-Շտրասե 33, 31535 Նեուշտադտ | Գերմանիա | Աբբոտտ Լաբորատորիես Գմբհ, Ֆրոյնդալի 9Ա, 30173 Հանովեր | Գերմանիա | ԱԴ | 23172 25.06.2025 | 19.11.2025 |
| 5 | Կրեոն 40000 | պանկրեատին (լիպազ 40000ԵՖՄ, ամիլազ 25000 ԵՖՄ, պրոտեազ 1600 ԵՖՄ) | դեղապատիճներ աղելույծ | 400մգ (20/2x10/) բլիստերում, (20) պլաստիկե տարայում | Աբբոտտ Լաբորատորիես Գմբհ, Յուստուս-ֆոն-Լիբիգ-Շտրասե 33, 31535 Նեուշտադտ | Գերմանիա | Աբբոտտ Լաբորատորիես Գմբհ, Ֆրոյնդալի 9Ա, 30173 Հանովեր | Գերմանիա | ԱԴ | 23173 25.06.2025 | 19.11.2025 |